

Հրատարակութիւն Ս. Ղազարի Հայկական Կանառին

Publication de l'Académie Arménienne de Saint-Lazare - Venise



1036-43

Կը հրատարակուի «Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան» նպաստով
Publié avec le concours de la « Fondation Calouste Gulbenkian »

ՄԿԻՏՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ՄԱՇՏՈՑՆԵՐՈՒ ՄԷՋ

(Շար. Բազմավէպ, 1972, ք. 2-3, էջ 183)

23. ԴՐՈՇՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ *

Մկրտութեան արարողութեան իսկոյն կը յաջորդէ Դրոշմինը. ձեռագիր Մաշտոցները ոչ մէկ բաժանում կը դնեն երկու խորհուրդներուն միջեւ:

Դրոշմը կը կայանայ մկրտեալին զգայարանքները սուրբ միւռոնով օծելուն մէջ, նախ ճակատը, ապա յաջորդաբար աչքը, ականջը, քիթը, բերանը, ձեռքերը, սիրտը, քամակը եւ ոտքերը: Այս է օծումներու աւանդական կարգը: Կան սակայն պատահական փոփոխութիւններ, օրինակի համար 1337ի, 1436ի, 1464ի, 1570ի, 1648ի ձեռագիրները կը դնեն նախ ականջի օծումը եւ ապա աչքինը. 1434ի Մաշտոցը օրինակած է նախ քիթի եւ ապա ականջի օծումը. 1583ի օրինակը՝ նախ քամակինը ապա սիրտինը. 1657ի ձեռագիրը ունի

*) Հոս կու տանք ամբողջացումը նախորդ յօդուածին.

22. ՓԱԿՈՒՄՆ ՄԿԻՏՈՒԹԵԱՆ

Թէ՛ Վիեննական եւ Թէ՛ Երուսաղէմեան Մաշտոցները, հետեւելով ձեռագիրներուն, Մկրտութեան արարողութիւնը կը վստահեցնէ երկամանեայ աղօթքով մը. Որ լուսաւորեցիք զարարածս քո... Աստուած որ մեծդ ես եւ մշտնջենաւոր, որոնք իրարու միացած են Խաղաղութիւն ամենեցունով:

Զոյգ աղօթքները ունին բոլոր ձեռագիրները: Բացառութիւն կը կազմեն 1338ի (Թիւ 27) Մաշտոցը, որ զանց կ'ընէ առաջին աղօթքը. ԺԳ դարու երկու ձեռագիրներ (Թիւ 1274, 144), ինչպէս նաեւ ԺԶ դարու Թիւ 1743 Մաշտոցները կը զեղչեն երկրորդ աղօթքը: Աղօթքները ետեւառաջութեամբ օրինակած են 1436ի, 1464ի եւ յաջորդաբար սակաւթիւ Մաշտոցներ:

նախ ականջի օծումը եւ ապա բերնին եւ հոտոտելիքինը. 1664ի Մաշտոցը նախ սիրտը ապա ձեռքերը:

Բացի ետեւառաջութիւններէն ունինք ձեռագիրներ՝ որոնք զանց կ'ընեն ինչ ինչ օծումներ. այսպէս 1583ի Մաշտոցը չունի բերնի օծումը, ԺԶ դարու թիւ 1743ը՝ քամակինը, 1466ի եւ 1626ի օրինակները՝ հոտոտելիքինը, 1421ինը աւելի ունի երեսի օծումը, որ յատուկ է միայն այդ ձեռագրին. նմանապէս Երեւանի մատենադարանի թիւ 4083 Մաշտոցը ունի ծունկերու օծումը՝ տարբեր ոտքի օծումէն:

Այս մանրամասնութիւններէն աւելի հետաքրքրական է թիկունքի օծումը, որ հինէն ի վեր գոյութիւն ունեցած է, սակայն չէ մտած բոլոր Մաշտոցներուն մէջ: Այսպէս Ս. Ղազարի թիւ 457 երկաթագիր Մաշտոցը չունի. ասոր հակառակ Երեւանի թիւ 1001 երկաթագիրը ունի օծումը. եւ որովհետեւ չունի հաստատուն տեղ մը, օրինակուած է այս կամ այն զգայարանքի օծումէն ետք, այսպէս՝ Երեւանի օրինակը կը դնէ յետ քամակի օծումին, 1216, 1432, 1434, 1469 տարիներու Մաշտոցները ունին սրտի օծումէն ետք, 1571 տարուանը՝ ոտքի օծումէն ետք, 1626ի Մաշտոցը ունի նախ ոտքի օծումը եւ ապա քամակինը եւ թիկունքինը:

(★) Թէ՛ Վիեննայի եւ թէ՛ Երուսաղէմի Մաշտոցները ունին ինը օծումները, ճիշտ այն կարգով որ կ'աւանդեն ձեռագիր Մաշտոցները. երկուքին մէջ ալ կը պակսի թիկունքի օծումը:

24. ՅԵՏ ԱՅՍՈՐԻԿ ՕԾԱՆԷ ՍՈՒՐԲ ԻԻՂՈՎՆ ՆԱԽ ԶՃԱԿԱՏՆ

Օծանէ բառին տեղ շատ անգամ ձեռագիրներու մէջ գործածուած է կնիք կամ տետնագրէ. միայն 1591ի Մաշտոցն է որ բացայայտ կերպով դրած է. Քահանայն սկսանի դրոշմել սուրբ միւռնուան:

Բացի ԺԳ դարու թիւ 144 Մաշտոցէն, միւս բոլոր օրինակները առանց բացառութեան կը շնորհեն թէ օծումը պէտք է սկսիլ ճակատէն. Նախ գնակատն: Երզնկացիի խմբագրութեան պատկանող ինչ ինչ ձեռագիրներ, այս հնագոյն խորագրին միջանկեալ, ճակատի օծումէն առաջ, աւելցուցած են նոր մը՝ յատուկ բանաձեւով, որ պիտի արտասանուի ճակատի օծումը սկսելէ առաջ. Յետ այսորիկ կնիքէ աստուածագործակ իւղովն ասելով. կնիքս գեղգ մշտնաւ սուրբ խաչիւ եւ դրոշմեմ փրկական սուրբ միւռնուան, յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. Նախ գնակատն ասելով...:

Ճակատը օծելու պահուն քահանային արտասանած բանաձեւն է. Իւր անոյշ հեղեալ յանուն Քրիստոսի ի վերայ քոյ, կնիք երկմաւոր պարգեւացն: Այս ընդհանուր ձեւէն զատ կը հանդիպինք հետեւեալ տարբերակներուն.

Իւր անոյշ հեղեալ յանուն Քրիստոսի կնիք երկմաւոր պարգեւացն (Ձեռ. թիւ 457).

Իւր անուն Քրիստոսի հեղեալ ի վերայ քո կնիք... (Ձեռ. թիւ 622, ԺԶ դար).

Իւր անոյշ հեղեալ ի վերայ քո յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ (Ձեռ. թիւ 1484, ԺԳ դար).

Իւր անոյշ հեղեալ ի վերայ քո Հաւր եւ... (Ձեռ. թիւ 1319, տարի 1530):

Այս զանազանութիւնները աւելի ձեռագրական տարբերակներ են, որոնք նկատողութեան եւս առնուելու անարժան են: Սակայն ունինք բազմութիւն մը ձեռագիրներու, սկսեալ Երեւանի երկաթագիր օրինակէն, որոնք բանաձեւը կ'աւարտեն... երկմաւոր պարգեւացն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. Հաղուադիւտ օրինակներ, ինչպէս Վատիկանի թիւ 100 Մաշտոցը դեռ կը շարունակէ այժմ եւ միշտ եւ յաւիտեան յաւիտեանից ամէն: Վատիկանի թիւ 17 Մաշտոցը, գրուած 1585ին, դիտել կու տայ թէ գայս պարտ է գիտել գառաջնոյն միայն յիշեցես գերբարդութիւնն:

(★) Ձեռագիր Մաշտոցները աչքէ անցնելէ ետք երբ ձեռք առնելու ըլլանք Վիեննա տպագրուածը, կը տեսնենք թէ որքան ճոխացած է արարողութիւնը, բեռնաւորուած է ամբողջ էջ մը խորագիրներով, որոնք բոլորն ալ անհարազատ են: Ճակտի օծումը սկսելէ առաջ ունի հետեւեալ նորութիւնները.

ա. Եւ եւս խաղաղութեան... Օրհնութիւն եւ փառք...:

բ. Քահանայն դնէ գաջ ձեռն ի գլուխ մկրտելոյն, եւ ապա տաւածեալ ունեւով գայն ի վերայ նորա, ասէ. Տէր Աստուած մարդասէր եւ ողորմած, խնդրեմք ի քեզ եւ աղաչեմք գեղգ...: Խորագրին նկատմամբ պիտի ըսենք թէ ամենեւին չենք հանդիպած ձեռագիրներու մէջ համապատասխան խորագրի մը: Իսկ աղօթքը չէ ընդհանրացած, այլ մնացած է չափազանց քիչ ձեռագիրներու մէջ. առաջին անգամ կը հանդիպինք 1216 տարուան Մաշտոցին մէջ, եւ այն եւս ոչ թէ դրոշմէն առաջ, ինչպէս է տպագրին մէջ, այլ ետքը, ըզգեստաւորութեան պահուն. քանի մը ձեռագիրներ, ինչպէս 1591, 1616, 1626 տարիներու Մաշտոցները նոյն այս աղօթքը ունին մկրտութենէն ութ օր վերջ, պսակը մկրտեալին գլուխէն վերցուցած ատեն: Հետեւաբար տպագիր Մաշտոցի աղօթքը հարազատ ըլլալով հանդերձ՝ տեղն անհարազատ է, եւ չէ ընդունուած Մաշտոցներու մեծամասնութենէն:

գ. Ստորեւ երկու սիւններու մէջ նախ կը դնենք ձեռագիրներու մէջ ընդհանրացած ճակատը դրոշմելու բանաձեւը, երկրորդ սիւնի մէջ Վիեննայի մաշտոցինը.

իւղ անոյշ հեղեալ յանուն Քրիստոսի ի վերայ քո, կնիք երկնաւոր պարգեւացն: (Այս ամուսն) իւղ անոյշ հեղեալ յանուն Յիսուսի Քրիստոսի ի վերայ քո կնիք եւ յասելն զայս՝ մեռնեալ բուքին առնելով նշան խաչի ի ճակատ նորա, յարեւաստեալին եւ երկնաւոր պարգեւացն: Յանուն Հօր եւ Որդւոյ, եւ Հոգւոյն սրբոյ. ամէն:

Ինչպէս համեմատութենէն կը տեսնուի, ամբողջովին նոր է բանաձեւին սկիզբը տալ մկրտեալին անունը. աւելորդ է միջանկեալ խորագրի մանրամասնութիւնները, իսկ վերջաբանին մէջ, հետեւելով ընտիր ձեռագիրներու, պէտք է ջնջել յամուսն... վերջաբանը, որովհետեւ քանի մը տող առաջ դրոշմը կատարուած է յամուսն Քրիստոսի: Երուսաղէմեան Մաշտոցի բանաձեւէն եթէ վերցնելու ըլլանք վերջին նորամուտ անապակաւութեան բառը, կ'ունենանք ձեռագիրներու հարադատ ձեւը:

25. ԶԳԱՅԱՐԱՆՔՆԵՐՈՒ ՕԾՈՒՄԸ

Ճակատի օծումին կը յաջորդեն ութը օծումներ եւս, հինգ զգայարաններուն, սրտին, թիկունքին եւ ոտքերուն: Բանաձեւները միշտ նոյնն են ձեռագիրներուն մէջ, ընդունելով հանդերձ ձեռագրական անթիւ տարբերակներ: Ընդհանրապէս օծումի բոլոր բանաձեւները կը սկսին նոյնպէս, այսինքն կնիքս Քրիստոս, կնիքս այս եղիցի, կնիքս աստուածային բառերով: Բացառութիւն կը կազմէ միայն լըս սելիքինը, որ ձեռագիրներու մէջ եզակի կերպով կը սկսի, այսինքն Օծումն սրբութեան եղիցի...: Այս բացառութիւնը յարգուած է Երուսաղէմեան 1961ի տպագրութեան մէջ, բայց ոչ Վիեննական Մաշտոցին մէջ, որ ջանալով միաձեւութիւն մը ստեղծել բոլոր բանաձեւներուն միջեւ, փոխելով կը դրէ. կնիքս որ յամուսն Քրիստոսի եղիցի քեզ...:

Ստորեւ կը դնենք ցանկը իւրաքանչիւր զգայարանին օծելու բանաձեւին, որոնցմէ առաջինը ընդհանրացածն ու ընդունուածն է բոլոր ձեռագիրներէն, իսկ յաջորդ ձեւերը լոկ բացառութիւններ են, որոնք կրնան հետաքրքրել նիւթիս մասնագէտները.

ա) Տեսանելիք

Կնիքս որ յանուն Քրիստոսի լուսաւորեցէ զաչս քո, զի մի երբեք նշնեսցես ի մահ:

Դրոշմս որ յանուն... (Ձեռ. թիւ 711, ԺԵ դար):

Օծումն սրբութեան լուսաւորեցէ... (Ձեռ. թիւ 860, տարի 1591):

Այս եւ յաջորդաբար բոլոր օծումներուն իրր վերջաբան, կարգ մը հին ձեռագիրներ կ'աւելցնեն Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. ամէն:

բ) Լսելիք

Օծումն սրբութեան եղիցի քեզ ի լսելութիւն աստուածային պատուիրանացն. կնիքս օծումն եղիցի քեզ... (Ձեռ. թիւ 1217, տարի 1455):

Կնիք առհաստէայ ի հնազանդութիւն հաւատոյ յանուն Հօր եւ... (Ձեռ. թիւ 82, տարի 1567):

գ) Հոտոտելիք

Կնիքս Քրիստոսի եղիցի քեզ ի հոտ անուշութեան կենաց ի կեանս.

Դրոշմն Քրիստոսի եղիցի քեզ... (Ձեռ. թիւ 932, տարի 1459):

Օծումն սրբութեան որ յանուն Քրիստոսի... (Ձեռ. թիւ 622, ԺԶ դար):

դ) Ճաշակելիք

Կնիքս այս եղիցի քեզ ի պահպանութիւն եւ դուռն ամուր չրթանց քոց.

Կնիքս... չրթանց քոց զի մի խոտորեսցիս ի բան չարութեան (Ձեռ. թիւ 929, տարի 1656):

Օծումն սրբութեան եղիցի քեզ... (Ձեռ. թիւ 1484, ԺԳ դար):

Դրոշմն որ յանուն Քրիստոսի եղիցի... (Ձեռ. թիւ 1891, տարի 1571):

ե) Ծօշափելիք (ափեքում)

Կնիքս Քրիստոսի եղիցի քեզ ի պատճառ բարեգործութեան, առաքիծի գործոց եւ վարուց.

Կնիք աստուածային եղիցի քեզ պահպան եւ դուռն ամուր չրթանց քոց, եւ պատճառ բարեգործութեան ամենայն գործոց. (Ձեռ. թիւ 182, տարի 1421):

Դրոշմն Քրիստոսի եղիցի... (Ձեռ. թիւ 624, տարի 1570):

զ) Սրտին (կուրծքին)

Կնիքս աստուածային սրբութեան սիրտ սուրբ հաստատեցէ ի քեզ, եւ հոգի ուղիղ նորոգեցէ ի փորի ջուսմ.

Դրոշմն աստուածային... (Ձեռ. թիւ 711, ԺԵ դար):

Օծումն աստուածային... (Ձեռ. թիւ 860, տարի 1591):

է) Քամակին (կոնակին)

Կնիքս այս որ յանուն Քրիստոսի եղիցի քեզ վահան ամուրթեան, որով կարացես զամենայն նեղութեան մուխ չարին չիջուցանել.

Դրոշմս որ յանուն... (Ձեռ. թիւ 624, տարի 1570):

Օծումն որ յանուն... (Ձեռ. թիւ 1591):

Կնիքս աստուածային եղիցի... (Ձեռ. թիւ 1086, ԺԶ դար):

Ունինք ձեռագիրներու բազմութիւն մը որ այս բանաձեւը ըսել կու տան ոչ թէ քամակին՝ այլ թիկունքին վրայ. իսկ քամակին համար հիւսած են նոր բանաձեւ մը, Օծումն առհաստէայ արքայութեան եղիցի քեզ (Ձեռ. թիւ 1429, տարի 1469 եւն.): Թիկունքի օծումը հինէն ի վեր զոյուութիւն ունեցած է, սակայն չէ ընդհանրացած ձեռագիրներու մէջ. այսպէս Երեւանի թիւ 1001 երկաթագիր Մաշտոցը ունի. եւ ապա գրիկամէշսն (օծամէ) ասելով. կնիքս որ յամուսն Քրիստոսի եղիցի քեզ պարիսպ ամուր շուրջ պատեալ գրիկունս քո հոգին նշմարաւորութեան, յամուսն Հար եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. ամէն:

ւոյն սրբոյ: Ունինք ուրիշ բանաձեւ մը եւս. ի քիկնամէջս իւր ընկալցի գեղ, ի հովանի քեւոց նորա յուսացիս (Ձեռ. թիւ 487, տարի 1386, եւն.): Երեւանի թիւ 3822 Մաշտոցը, գրուած ժԵ-ԺԶ դարուն, կու տայ թիկունքի երրորդ բանաձեւ մը. Եւզս Քրիստոսի լիցի քեզ պահապան եւ ի քիկնամէջս իւր ընկալցի գեղ ի հովանի քեւոց նորա յուսացիս եւ եղիցի քեզ ասպար սուրբ փրկական ի Տեառնէ:

բ) Ոստիկան

Կնիքս աստուածային ուղղեսցէ զգնացս ըս ի կեանս յաւիտենից.

Դրոշմս աստուածային... (Ձեռ. թիւ 624, տարի 1570).

Օծումն յանուն Քրիստոսի... (Ձեռ. թիւ 622, ժԶ դար):

Ի վերայ իժի եւ քարի զնացես (Ձեռ. Երեւանի թիւ 4083):

Բացի այս ինքն օծումներէն ունինք երկու յաւելեալ օծումներ եւս. այսպէս երեսի օծումը հետեւեալ բանաձեւով. Լոյս աստուածային ծագելով ի վերայ երեսաց քոց (Ձեռ. թիւ 182, տարի 1421). Երեւանի թիւ 4083 Մաշտոցը ունի ծունկերու օծում մը սա խօսքերով. Ծունկի իմ սկարացան ի պահոց եւ մարմին իմ այլագումեցաւ. բոլորովին տարբեր բանաձեւում ունի Երեւանի թիւ 3822 Մաշտոցը. Կնիքս Քրիստոսի ուղղեսցէ զծունկսդ սկարացեալ, զի գնացես սրբութեամբ ի տան Տեառն ըստ հանձնից Աստուծոյ:

26. ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՈՂԶՈՅՆԸ

Օծումի արարողութիւնը աւարտելուն քահանան կ'ողջունէ մը-կըրտեալը ըսելով. Խաղաղութիւն ընդ քեզ փրկեալդ Աստուծոյ: Բացի ժԶ դարու թիւ 1743 Մաշտոցէն, միւս բոլոր ձեռագիրները անխափան ունին այս բանաձեւը, ձեռագրական աննշան տարբերակներով, որոնք իրենք իրենց մէջ յատկանշական ալ են. այսպէս գործածուած են

Խաղաղութիւն ընդ քեզ (Ձեռ. Երեւանի թիւ 1001 եւ շատ ուրիշներ):

Խաղաղութիւն ընդ քեզ ծառայ Աստուծոյ (Ձեռ. թիւ 487, տարի 1386):

Խաղաղութիւն ընդ քեզ օծեալդ Աստուծոյ (Ձեռ. թիւ 1894, տարի 1432):

Խաղաղութիւն ընդ քեզ բերկրեալդ Աստուծոյ (Գ. Երզնկացիի խմբագրութիւն):

Քահանային ողջոյնին կը պատասխանէ մկրտեալն, փրկեալն, նորակնքեալն կամ կնքեալն. Եւ ընդ հոգւոյդ քու: Շատ հազուագիւտ ձեռագիրներու մէջ զանց եղած է այս պատասխանը:

Նկատելի է այս ուղղութեամբ Գէորգ Երզնկացիի խմբագրութեան բերած նորութիւնը որ կ'ըսէ. Յետ այսորիկ ասէ քահանայն առ մկրտեալն խաչակնքելով Գ. անգամ. Խաղաղութիւն...: Հոս Գ անգամ բացատրութիւնը կը պատկանի խաչակնքելին, որովհետեւ ոչ

մէկ ձեռագրի մէջ հանդիպած ենք որ քահանան երեք անգամ կրկնէ Խաղաղութիւնը:

(★) Վիեննական Մաշտոցը հետեւեալ կերպով ունի խաղաղութեան ողջոյնը.

Յետ այսորիկ քահանայն երիցս խաչակնքեալ ի վերայ դրոշմեայն, ասէ.

Քնն. Խաղաղութիւն ընդ քեզ, փրկեալդ Աստուծոյ:

Կնք. խոնարհի եւ ասէ. Եւ ընդ հոգւոյդ քու:

Քնն. Խաղաղութիւն ընդ քեզ, օծեալդ Աստուծոյ:

Կնք. խոնարհի եւ ասէ. Եւ ընդ հոգւոյդ քու:

Քնն. Խաղաղութիւն ընդ քեզ, բերկրեալդ Աստուծոյ:

Կնք. խոնարհի եւ ասէ. Եւ ընդ հոգւոյդ քու:

Հոս որդեգրուած է երկար ու անհարազատ ձեւ մը, այսինքն քահանային կրկնել տալը երեք անգամ Խաղաղութիւնը, ամէն անգամ փոխելով բառը. երեք նախադասութիւններն ալ գործածուած են ձեռագիրներու մէջ, սակայն ոչ միատեղ. ուստի ուղիղ եւ հարազատը մէկ անգամ ըսելն է, եւ այն ալ առաջինը. Խաղաղութիւն ընդ քեզ փրկեալդ Աստուծոյ:

Երուսաղէմեան տպագրութիւնն ալ ունի երկու նախադասութիւն փոխանակ մէկի. Խաղաղութիւն ընդ քեզ փրկեալդ Աստուծոյ. Խաղաղութիւն ընդ քեզ օծեալդ Աստուծոյ, ինչ որ չենք հանդիպած ձեռագիր Մաշտոցներու մէջ: Բաւական է ըսել միայն առաջին մասը՝ հետեւած ըլլալու համար հայկական վաղեմի աւանդութեան:

27. ԶԳԵՍՏԱՒՈՐՈՒՄ

Մեր ձեռքը հասած Հնագոյն Մաշտոցներու մէջ, մկրտեալին ըզ-զեստաւորման արարողութիւնը շատ պարզ յօրինուածք ունի, այսինքն կը կայանայ համառօտ խորագրէ մը եւ քանի մը տող աղօթքէ. Ապա զգեցուցանէ եւ ասէ գաղօթս. Օրհնեալ ես բարեխնամող Աստուած...: Խորագիրը իր աղօթքով զանց եղած է միայն 1386 տարուան Մաշտոցի մէջ. մինչ ուրիշներ ժամանակի ընթացքին կամաց կամաց կը բեռնաւորեն խորագիրը, ու պարզ զգեցուցանէ՝ բառին վրայ կ'աւելցնեն եւ քաջ կապէ, կամ պսակէ, կամ զգեցուցանէ ըսպիտակ հանդերձ եւն.: ԺԳ դարու թիւ 1484 Մաշտոցը կ'աւելցնէ եւ ամէն գօտի ընդ մէջ. 1421ի օրինակը եւ խաչ ի յուսն. ԺԶ դարու ձեռագիրներ կը յանձնարարեն կապել գնարօտն ի պարանոցն. 1571ի Մաշտոցը դնէ գվարշամակն ի գլուխն եւ կապէ գօտի եւ ամէն (ամէն) գլխալն:

Զգեստաւորման միատող պարզ խորագիրը իր ճոխութեան գաղաթնակէտին պիտի հասնի Գէորգ Երզնկացիի կատարած խմբագրու-

թեամբ, ուր զգեստաւորումը պիտի առնէ թատերական ձեւ, զգեստի իւրաքանչիւր կտորին վրայ ըսել տալով յատուկ բանաձեւ մը:

Եւ ապա այրէ գոճիք հանդերձին հրով եւ գգեցուցանէ եւ ասէ.

Ձգեցո՛՛ Տէր սմա հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան, եւ շուրջ պատեա՛ զգեստովս փրկութեան, չնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ...:

Ապա դնէ գինկուղն ի գլուխն եւ ասէ. Դիր Տէր սաղաւարտ ի դլուխ սորա, պատերազմել ընդ զօրութիւնս թշնամոյն, չնորհօք...:

Եւ ապա կապէ զմարօտն ի վիզն եւ ասէ. Ձգեցո՛՛ Տէր պարանոցի սորա զարդարութիւն եւ սրբեա յամենայն աղտեղութենէ մեղաց, չնորհօք...:

Եւ ապա գմիջոցն եւ ասէ. Շուրջ պատեացէ կամար հաւատոյ զմէջս սրտի եւ զմտաց սորա, եւ շիջուցէ ի սմա զխորհուրդս աղտեղիս, եւ զօրութիւն չնորհաց քոց յամենայն ժամ բնակեացէ ի սմա, չնորհօք...:

Եւ ապա ի գլուխն մարօտն եւ ասէ. Ցնծասցէ անձն իմ ի Տէր, զի իբրեւ փեսայի եդ սմա պսակ եւ որպէս զհարսն զարդարեաց զսա:

Եւ ապա ծածկեցէ ի վերայ ամենայնին սպիտակ հանդերձ եւ ասէ. Ձգեցեալ պսակ զնասցես անյաղթ առաջի աթոռոյն Աստուծոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ժառանգ յաւիտենական կենացն, այժմ...:

Եւ ապա գմումեղէնս կարմիր եւ կանաչ ի ձեռնս եւ ասէ. Առ զյապտերս հաւատոց եւ բարի դործոց, զի ի դալ երկնաւոր փեսային արժանասցիս մտանել ի յառապատն լուսոյ եւ վայելել զկեանսն յաւիտենից:

Եւ ասէ գաղօքս գայս. Օրհնեալ ես բարեխնամող Աստուած...:

Դիտելի է որ ամբողջ հատուածը յատուկ է միայն Երզնկացիի խմբադրութեան պատկանող ձեռագիրներուն, եւ ամենեւին չեն սըպլըրդած մասեր կամ նախադասութիւններ, հայկական հին խումբի պատկանող Մաշտոցներէն ներս:

(★) Գէորգ Երզնկացիի խմբադրութեան պատկանող ձեռագիրները, իրենց որոշ աղղեցութիւնը ունեցած են մեր տպագիր Մաշտոցներուն վրայ, քիչ՝ Երուսաղէմի օրինակին, համեմատաբար աւելի՝ Վիեննական տպագրութեան վրայ:

Վիեննական Մաշտոցը ա) Դպիրներուն ափսէով բերել կու տայ գինգուղն եւ գգգեստն սպիտակ, որպէսզի քահանան օրհնէ Օրհնեալ եւ Տէր ամենակալ, Հայր եւ առաքիչ Տեառն մերոյ աղօթքով: Հոս նորահնար է խորագիրը, իսկ աղօթքը ամենեւին չէ ընդհանրացած ձեռագիրներու մէջ. հարկւրաւոր ձեռագիրներէ միայն Ս. Ղազարի 1216ի (թիւ 199) Մաշտոցն է որ¹⁶ունի աղօթքը, եւ իրմէ վերջ, բացի 1434 տարուան օրինակէն ոչ մէկ ձեռագիր օրինակած է աղօթքը, որովհետեւ չեն զգացած պահանջը զգեստն օրհնելու յատուկ աղօթքի մը, այլ զգեստաւորումէն ետք կը գոհանան կարդալով աւանդական Օրհնեալ եւ քարեխնամող Աստուած աղօթքը:

բ) Յետ այսորիկ քահանայն դնէ ի գլուխ դրոշմելոյն գինգուղն ասելով. (Այս ամուսն) ա՛ռ գայածառ հանդերձս, գոր ամաբատ կրես-

ցես առաջի ատենի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի ունիցիս կեանս յաւիտենականս. ամէն: Խորագիրը յօրինուած է վերեւ մէջ բերուած Երզնկացիի խմբադրութեան պատկանող ձեռագիրներու աղղեցութեամբ, մինչ բանաձեւը հիւսուած է հրատարակիչներու կողմէ, որ զուրկ է ձեռագրական տուեալներէ:

դ) Ապա լուցեալ գերկուսին պատրաստեալ մումեղէնս տայ դրոշմելոյն կամ կմփաօրն. հոս ալ խորագիրն իմաստը կը համապատասխանէ ձեռագիրներու, մինչ ըսուած բանաձեւը կը խոտորի հետեւեալ կերպով.

ՁԵՌԱԳԻՐ

ՏՊԱԳԻՐ

Առ զյապտերս հաւատոց եւ բարի դործոց, զի ի դալ երկնաւոր փեսային արժանասցիս մտանել ի յառապատն լուսոյ եւ վայելել զկեանսն յաւիտենից:

Առ զվառեալ լապտերս, եւ անսողոտանելի պահեա զդրոշմն քո. պահեա զպատուիրանս Աստուծոյ, զի յորժամ դայցէ Տէր ի հարսանիս, ընդ առաջ ելցես նմա ի միասին ընդ ամենայն սուրբս եւ ունիցիս զկեանսն յաւիտենականս. ամէն:

Երուսաղէմի տպագիր Մաշտոցը ոչ մէկ բանաձեւ ունի, այլ հետեւելով հին ձեռագիրներու ուղղութեան, կը բաւականանայ խորագրին մէջ յանձնարարել Հանդերձ սպիտակ եւ մօր եւ կապէ զմարօտն եւ տայ գերկուս վառեալ մումեղէնս ի ձեռն:

28. ԽՈՐԱՆԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ

Քահանան կ'առաջնորդէ մանուկը դէպի բեմ, համբուրել կու տայ խորանի երեք անկիւնները, եւ ապա կ'ըսէ Տէր Աստուած ամենակալ... քեզ խոնարհեցուցանեն հաւատացեալք գգլուխս իւրեանց աղօթքը:

Ձեռագրական այս հատուածն ալ ենթարկուած է բազմաթիւ փոփոխութիւններու: Նախ Մաշտոցներու մեծամասնութիւնը նկատելով որ խորագիրը մեծահասակ մկրտեալներու համար բանաձեւուած է, զանց ըրած են, պահելով միայն համապատասխան աղօթքը: Ասոնց հակառակ Մաշտոցներու խումբ մըն ալ դեռ աւելի մանրամասնած են խորագիրը եւ կարելիին չափ յստակած են. ահա քանի մը օրինակներ.

Յետ այսորիկ հանէ ի բեմն եւ երկրպագեցուցանէ առաջի սրբոյ սեղանոյն, եւ երիցս անգամ համբուրել յերեսին կողմանս. (Ձեռ. թիւ 457, Թ-Ժ դար):

Յետ այսորիկ հանէ ի բմն եւ երկրպագէ սրբոյ սեղանոյն եւ սուրբ խաչին, համբուրելով զչորեսին կողմն սեղանոյն եւ զխաչն, եւ իջեալ կարգաւ զամենայն եկեղեցին. (Ձեռ. Թիւ 1133, ԺԳ դար):

Եւ յետ այսորիկ հանեն ի բմն եւ երկրպագեցուցանեն առաջի սուրբ աւագանին երիցս անգամ եւ համբուրէ յերեսին կողմանսն, այսինքն զսուրբ սեղանն եւ զսուրբ աւագանն եւ զսուրբ դուռն տաճարին. (Ձեռ. Վատիկանի Թիւ 100, ԺԳ դար):

Երկրպագեցուցանէ սուրբ սեղանոյն, նոյնպէս սուրբ աւագանին, որ է մայր հոգեւոր. նոյնպէս եւ սուրբ դրան տաճարին. (Ձեռ. Թիւ 1420, տարի 1497):

Երկրպագեցուցանէ առաջի սեղանոյն եւ խորանին եւ աւագանին եւ դրան տաճարին. (Գէորգ Երզնկ. խմբագրութիւն):

Ձանազանեալ աւանդութիւններէն կը տեսնուի թէ ինչպէս խորանի երկրպագութենէն կամաց կամաց անցած են սուրբ խաչին, աւագանին, տաճարի դրան եւ այլ երկրպագութիւններու: Սուրբ սեղանին երկրպագութիւնը երկաթագիր Մաշտոցներու համաձայն, կը կայանայ երեք անգամ համբուրելով յերից կողմանցն (սեղանոյն), մինչ յաջորդ դարու ձեռագիրները պիտի նախընտրեն ի չորեսին անկիւնսն բացատրութիւնը: 1591ի Մաշտոցը ունի հետաքրքրական անդրադարձութիւն մը. Եթէ եկեղեցին երեք խորան է, մի անգամ աւագ խորանին երկիր պագանէ, եւ մի անգամ յաջ խորանն, մի անգամ յառեակ. իսկ եթէ մի խորան է՝ մի անգամ համբուրէ զմէջ խորանին եւ մի անգամ զաջ կողմն եւ մի անգամ զձախն. եւ այսչափ է երկրպագութիւնն եւ ոչ այլոք:

Երկրպագութիւնը կատարուած պահուն, կարգ մը ձեռագիրներ քահանային բերանը կը դնեն համառօտ ասացուածք մը, որու ծագումը բաւական հին պէտք է ըլլայ, եւ որ ժամանակի ընթացքին ձեռագրական շատ մը տարբերակներով ճոխացած է: Թէեւ Ս. Ղազարի Թիւ 457 երկաթագիր Մաշտոցը, ինչպէս նաեւ անոր հետեւող անթիւ ձեռագիրներ, չունին ոչ մէկ բանաձեւ, սակայն Երեւանի Թիւ 1001 երկաթագիր օրինակը ունի հետեւեալը. Այս անուն եկեալ յերկրպագութիւն ամենատարբերութեամբ Երրորդութեամբ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ: Յաջորդ դարերուն այս պարզ բանաձեւը ունեցած է իր յեղաշրջումը հետեւեալ կերպով.

Այս անուն ծառայ Գրիստոսի եկեալ ի մկրտութիւն երկրպագութեան սեղանոյ յանուն Հաւր... (Ձեռ. Թիւ 1133, ԺԳ դար):

Եւ ասացէ երիցս անգամ. Այս անուն ծառայ Աստուծոյ եկեալ յերկաթագութենէ ի մկրտութիւն, ի մկրտութենէ յերկրպագութիւն սրբոյ սեղանոյ. մերկացաւ զանօրէնութիւն եւ զգեցաւ զլոյս եւ զանմահութիւն. եւ երթայ յաւագանն եւ ի դուռն եւ ասէ. Մերկացաւ զանօրէնութիւն զգեցաւ զլոյս եւ զանմահութիւն մկրտութեան երկրպագեցէ աստուածային սուրբ աւագանին եւ դրան սրբոյ տաճարին. (Ձեռ. Վատիկանի Թիւ 100, ԺԳ դար):

Մերկացաւ զանօրէնութիւն եւ զգեցաւ զլոյսն եւ զանմահութիւն եւ եկեալ ի մկրտութիւն (sic) յերկրպագութիւն առաջի սուրբ սեղանոյ Գրիստոսի, յանուն Հօր

եւ... եւ սուրբ տաճարին յանուն Հօր... սուրբ աւագանին Գրիստոսի յանուն Հօր...: Երիցս անգամ ասէ զանուն. մերկացաւ զանօրէնութիւն զգեցաւ զլոյս. (Ձեռ. Թիւ 1115, տարի 1616):

Այս անուն եկեալ կամաւ ի մկրտութենէ յերկրպագութիւն, երկրպագէ սրբոյ սեղանոյս եւ խորանին եւ աւագանին եւ դրանց տաճարին. իւրաքանչիւրոյ զիւր անուն յիշեցէ եւ համբուրէ. (Գէորգ Երզնկ. խմբագրութիւն):

(★) Այս զանազան անդրադարձութիւններէն ետք երբ կ'անցնինք քննել տպագիր Մաշտոցները, կը տեսնենք թէ որքան փոփոխութիւններու ենթարկուած են անոնք ու հեռացած մեր նախնիքներու աւանդութիւններէն: Նկատմամբ Վիեննա տպագրուած Մաշտոցին ունինք հետեւեալ անդրադարձութիւնները.

ա) Վերեւ տեսանք հարազատ խորագիրը, որ կը պատուիրէ երկրպագել խորանին, եւ թէ որքան սերտօրէն կ'ապուած է անոր յաջորդ աղօթքը որ կ'ըսէ. Տէր Աստուած ամենակալ... Բեզ խոնարհեցուցանեն հաւատացեալ գգլուխս իւրեանց: Տպագիր Մաշտոցը վտարած է խորանի երկրպագութեան վերաբերեալ խորագիրը, եւ որպէսզի անիմաստ չմնայ աղօթքը, կը յօրինէ նոր խորագիր մը որ կ'ըսէ. Եւ ապա հրամայէ քահանայն դրոշմելոյն կամ կնիքաւորն խոնարհեցուցանել գգլուխն, եւ իմքն ասէ Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

բ) Աղօթքին կը յաջորդէ երկրորդ մը Փառք Բեզ քաղաւոր ամեն սկզբնաւորութեամբ, որ միացած է նախորդին խաղաղութիւն ամենեցունով: Այս կազմն ալ անհարազատ է, որովհետեւ երկրորդ աղօթքը ունի իր առանձին տեղը, ինչպէս պիտի տեսնենք յաջորդ թիւին մէջ:

գ) Մինչ ձեռագիրներու մէջ նախ կը կատարուի երկրպագութիւնը խորանին, եւ ապա կ'արտասանուի Տէր Աստուած ամենակալ երկրպագութեան աղօթքը, տպագրութեան մէջ փոխուած է կարգը:

դ) Երկրպագութեան համար յօրինուած է ընդարձակ խորագիր մը այնպիսի մանրամասնութիւններով, որոնք անհարազատ ըլլալէ աւելի անգործնական ալ են. Յաւարտ աղօթիցն քահանայն առեալ գդրոշմեալն լուցեալ մոմեղիմօքն ի վերայ բազկաց՝ եթէ մանուկ իցէ...: Նկատմամբ արտասանուած բանաձեւին, չենք կրնար ըսել թէ անհարազատ է, որովհետեւ չունինք հաստատուն ընդհանրացած բանաձեւ մը որ ընդունելի եղած ըլլայ ձեռագիրներու մեծամասնութենէն, սակայն այսքանն որոշ է որ ընտիր օրինակներ շատ անգամ զուրկ են որեւէ բանաձեւէ:

Երուսաղէմեան Մաշտոցին մէջ նկատելի են հետեւեալ կէտերը.

ա) Նախ պէտք է կատարել երկրպագութիւնը եւ ապա կարգալ երկրպագութեան աղօթքը Տէր Աստուած ամենակալ... որպէսզի աղօթքը առնէ իր ամբողջական իմաստը: Եւ այդ պարագային

բ) Աղօթքը ինքնաբերաբար կ'անջատուի զգեստաւորման աղօթքէն, որովհետեւ ոչ մէկ կապ ունի: Տարբեր բառերով պէտք է պահել հետեւեալ կարգը.

Զգեստաւորում եւ ապա աղօթք. Օրհնեալ ես բարեխնամող Աստուած...

Երկրպագութիւն Սուրբ սեղանին եւ ապա աղօթք. Տէր Աստուած ամենակալ...

գ) Անհարազատ նորութիւն մըն է աղօթքին յաջորդող Հանէ ի բնմն գնորդանայն եւ ասէ. Մտից առաջի սեղանայ... Դատ արա ինձ...: Նման խորագրի եւ սաղմոսի ոչ մէկ ձեռագիր Մաշտոցի մէջ հանդիպած ենք:

դ) Երկրպագութեան պահուն արտասանուած բանաձեւը ընդհանուր գիծերուն մէջ կը հետեւի Գէորգ Երզնկացիի խմբագրութեան պատկանող ձեռագիրներու ունեցածին.

ՁԵՌԱԳԻՐ

Այս անուն եկեալ կամաւ ի մկրտութենէ յերկրպագութիւն, երկրպագէ սրբոյ սեղանոյս եւ խորանիս եւ աւագանիս եւ դրանց տաճարիս:

ՏՊԱԳԻՐ

Այս անուն ծառայ Քրիստոսի եկեալ յերախայութենէ ի մկրտութիւն, ի մըլըրտութենէ յերկրպագութիւն: Երկըրպագէ սուրբ սեղանոյս. երկրպագէ սուրբ խորանիս. երկրպագէ սուրբ աւագանիս. որ մերկացաւ զանօրէնութիւն, եւ զգեցաւ զլոյս աստուածգիտութեան:

Անիմաստ է երկրպագութեան պահուն դարձեալ յիշել թէ Ա. Ա.ը եկած է յերախայութենէ ի մկրտութիւն. ինչպէս՝ նոյն իմաստն ունին սեղան եւ խորան բառերը: Եթէ Երուսաղէմեան տպագրութիւնը կ'ուզէ հետեւիլ որոշ խումբի մը պատկանող ձեռագիր Մաշտոցներու, պէտք է դուրս հանէ Որ մերկացաւ... աստուածգիտութեան հատուածը, որ թէեւ ընդունուած է ինչ ինչ ձեռագիրներէ, սակայն ո'չ՝ Գէորգ Երզնկացիի խմբագրութեան պատկանող Մաշտոցներէ:

29. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՁԱԿՈՒՄ

Սուրբ սեղանին երկրպագութենէն ետք քահանան կը հաղորդէ մկրտեալը, կ'առաջնորդէ դէպի եկեղեցւոյ դուռը երանի որում քուրքիւն եղեւ մեղաց սաղմոսն ըսելով: Արարողութիւնը կ'աւարտի

քարոզով եւ Փառք քաջաւոր յաւիտեական աղօթքով, ուր խորտացած են գեղեցիկ հոգեւոր իմաստներ, շնորհակալ ըլլալով Աստուծոյ որ արժանի արարեր զսա որդեգրութեան քեզ, հաղորդելով արժանաւորութեամբ մարմնոյ եւ արեան միաձմի քո:

Հաղորդութեան վերաբերեալ խորագիրը եւ հաղորդեցուցանէ սուրբ խորհրդոյն զանց ըրած են միայն ժե դարու երկու կամ երեք Մաշտոցներ, մինչ անոնց հակառակ ամէն Մաշտոց ունի խորագիրը անխափան:

Հաղորդութիւնը տալու պահուն յատուկ բանաձեւ մը չենք գտներ բնիկ հայկական Մաշտոցներու մէջ. առաջին անգամ 1345ի Սիսի Մաշտոցը, որ խառնուրդ մըն է լատին եւ հայ արարողութիւններու, ունի Մարմին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի լիցի քեզ փրկաւ ինձ եւ առաջնորդ յանվախսան ի կեանս. ամէն, ինչ որ յաջորդաբար պիտի որդեգրուի Գէորգ Երզնկացիի կատարած խմբագրութենէն:

Եւ յղարկեմ մինչեւ ի դուռն եկեղեցւոյն սաղմոսելով. Երանի որում քուրքիւն: Ունինք ձեռագիրներու բազմութիւն մը, սկսեալ ԺԳ դարէն, որոնք դուրս ձգած են այս մասը, հաւանաբար անհաշտ դտնելով արարողութեան հետ, որովհետեւ սաղմոսին պիտի յաջորդէ քարոզն ու աղօթքը:

Համառօտ քարոզին կը յաջորդէ Փառք քաջաւոր յաւիտեական հաղորդութեան աղօթքը, որ միաժամանակ կարելի է նկատել նաեւ արարողութեան փակման աղօթքը: 1216 տարուան Մաշտոցը ունի երկրորդ աղօթք մը եւս հաղորդութիւն եւ հաստիչ խաղաղութեան, որ միացած է նախորդին հաղորդութիւն ամենեցունով: Այս երրորդ աղօթքը չէ ընդհանրացած յաջորդ դարու Մաշտոցներու մէջ, բացառութիւն կը կազմեն հազիւ քանի մը օրինակներ: Ունինք ձեռագիրներու ուրիշ խումբ մը, որոնք իբր երկրորդ աղօթք ունին Յորժամ նկարեաց գեղ յորովայնի. իսկ Երեւանի մատենադարանի թիւ 4083 Մաշտոցը ունի բոլորովին նոր աղօթք մը Դարձեալ մատուցանմբ քեզ քաջաւոր:

(★) Հաղորդութեան վերաբերեալ ամէն խորագիր անհետացած է Վիեննական Մաշտոցէն, պահուած է սակայն աղօթքը, որ հաղորդութիւն ամենեցունով մը միացած է երկրպագութեան պահուն արտասանուած Տէր Աստուած ամենակալ աղօթքին: Դիտելի է սակայն որ հրատարակողները զիտակից կերպով զեղծած են հաղորդութեան խորագիրը եւ ոչ աղօթքը. եւ որովհետեւ աղօթքին մէջ կը յիշատակուի... արժանի արարեր որդեգրութեան քեզ, հաղորդելով արժանաւորութեամբ մարմնոյ եւ արեան միաձմի քո, ջնջած են հաղորդութեան մասին եղած ակնարկը ու վերածած... արժանի արարեր որդեգրութեան Հօրդ երկնաւորի:



Երոստաղէմեան Մաշտոցը ունի Հաղորդութեան թէ՛ խորագիրը եւ թէ՛ աղօթքը. զեղչած է միայն Երանի որում եղել սաղմոսը եւ երկ-տողեան քարոզը, ինչպէս զեղչուած է շատ մը ձեռագիր Մաշտոց-ներու մէջ:

Թէ՛ Վիեննայի եւ թէ՛ Երոստաղէմի Մաշտոցները ունին հոս եր-կրորդ աղօթք մը, խաղաղութիւն եւ հաստիչ խաղաղութեան, որ ինչ-պէս ակնարկեցինք վերեւ, ընդհանրացած է ձեռագիրներու մէջ, մանաւանդ հայկական հին խմբագրութեան պատկանող Մաշտոցնե-րու մէջ:

30. ՓԱԿՄԱՆ ԽՈՐԱԳԻՐ

Եւ ողջունեալք ի ժողովրդացն յուղարկին ի տունս իւրեանց:

Եւ ուր օր յեկեղեցւոյն կացցէ, սպիտակագգեստ լիցի, եւ գլուխն ծածկեսցէ սպիտակ փակեղամբ: Զգոյշ կացցէ աղօթից եկեղեցւոյն պարապելով յամենայն ժամ, հաղորդելով մարմնոյ եւ արեան Քրիս-տոսի:

Սորագիր մը որ մինչեւ ԺԸ դարու ձեռագիրներու մէջ մնացած է անաղարտ: Սակայն ասոր կից հինէն ի վեր եղած են համառօտու-թիւններ, ջանալով պահել այս կամ այն կէտը: 1216ի Մաշտոցը կը համառօտէ ըսելով. Եւ արձակին ի տունս իւրեանց եւ գուր օր սպի-տակ փակեղամբ կացցէ: 1434ի Մաշտոցը շեշտը կը դնէ սպիտակ փա-կեղին վրայ ըսելով. Եւ ուր օր սպիտակ փակեղամբ կացցէ. ԺԳ դարու ձեռագիրներէն ոմանք, փոխանակ ուր օրուան՝ եօթը օր կը պատուիրեն մնալ եկեղեցի. ԺԳ դարու թիւ 1133 ձեռագիրը փոխա-նակ պահանջելու որ մկրտեալը ուր օր մնայ եկեղեցի, կը պահանջէ ստեպ գալ յեկեղեցին աւուրս եօթն. նոյն այս ձեռագիրը, ինչպէս նաեւ Վատիկանի ԺԳ դարու Մաշտոցը եւ ուրիշներ, բացի եկեղեցի դալէն, կը պատուիրեն որ մկրտեալը ուր օր ներկայ ըլլայ եկեղեց-ւոյ աղօթքներուն եւ պատարագին:

Ունինք դեռ բազմաթիւ բացատրութիւններ եւ նրբութիւններ նը-կատմամբ այս խորագրին, սակայն ժամանակի ընթացքին, շատ հա-ւանաբար գրիչները անդրադառնալով անոնց անգործածելիութեանը, զանց կ'ընեն օրինակելէ ամբողջ խորագիրը, եւ կամ կը գոհանան գրելով Եւ արձակին ի տունս իւրեանց:

Գէորգ Երզնկացիի կատարած խմբագրութեամբ, հին խորագիրը կը ստանայ նոր կերպարանք, նոր յաւելումներ, որոնք չափազանց պիտի ընդհանրանան ԺԷ-ԺԸ դարու Մաշտոցներու մէջ: Արարողու-թիւնը եկեղեցւոյ մէջ վերջանալէ ետք, քահանայ աւետարանաւ եւ ժամանաբար կ'ուղղուի մկրտեալին տունը, ճամբու ընթացքին եր-գելով Լոյս ի լուսոյ ի Հօրէ շարականը ամբողջութեամբ: Տուն հաս-

նելուն կ'ըսուի Սուրբ խաչիւս եւ Պահպանեա աղօթքը: Այս նոր հատ-ուածը կ'աւարտի հետեւեալ խորագիրով. Եւ ընտանիքն ստեպ կան աղօթից գուր օր ի բուն, փոխանակ մկրտեալին, անոր ծնողքն է որ ուր օր աղօթքով պէտք է անցընէ, ջանալով ուր օր շարունակ մա-նուկը բերել եկեղեցի մտնով եւ ձիւնով եւ խնկով, որպէսզի քահա-նան հաղորդէ մանուկը սուրբ հացով: ԺԷ դարու Գէորգ Երզնկացիի խմբագրութեան այս հատուածը պիտի վերածուի յատուկ կանոնի մը, առանց ստանալու հաստատուն ձեւ, այնպէս որ իւրաքանչիւր ձեռագրի գրիչ իր կամքին համաձայն պիտի աւելցնէ կամ զեղչէ մա-սեր: Հոս կու տանք ԺԷ դարու Մաշտոցի մը (թիւ 1086) պատկերը, տեսնելու համար հոն գրիչին կամայականութիւնը.

Եւ յետոյ առեալ տանին ի տունս եւ դնեն գտալայն ի գիրի կնքանքն եւ ասի շարական. Այսօր բանն ի Հօրէ... Լոյս ի լուսոյ ծագեալ ի Հօրէ... Եւ ապա կար-դան գաւետարանն ըստ Մատթէոսի. Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր. վերջ գա-նուն նորա Յիսուս: Սուրբ խաչիւս: Պահպանեա: Հայր մեր: Եւ նստին ի սեղան:

Եւ ի լրման Խ աւուրն, բերեն գտալայն յեկեղեցին եւ այս կարգ կատարի. Սաղմոս եւ շարական. Մարմնացեալ ի: Տէր ի տաճար սուրբ: Աւետարան ըստ Ղու-կասու. Եւ իրեւ լցան աւուրք ուր: Եւ յաւարտ աւետարանին հաղորդեն ասելով գայս. Քրիստոս պատարագեալ բաշ: Եւ յետոյ. Սուրբ աւետարանաւ: Պահպանեա գմեղ: Հայր մեր:

Բնականաբար առանձին ուսումնասիրութեան կարօտ են այս ամ-բողջ յաւելումները, տեսնելու համար թէ ինչպէս երեւան ելած են տեղական սովորութիւնները, քառասնորեայ եկեղեցւոյ արարողու-թիւնը, եւ թէ ի՞նչ ընդունելութիւն դտած է Մաշտոցներէ:

(★) Տպագիր Մաշտոցներու մէջ անհետացած է փակման խո-րագիրը, ինչ որ տրամաբանական ալ է. Վիեննական Մաշտոցը ա-րարողութիւնը կ'աւարտէ Սուրբ խաչիւս, Պահպանիչ, Հայր մերով, աւելցնելով իր կողմէ (Այս անուն) երբ ի խաղաղութիւն, եւ Տէր եղիցի ընդ բեզ, բանաձեւը: Երոստաղէմեան տպագրութիւնը ունի միայն Սուրբ խաչիւս քարոզը, ապա կ'անցնի Որք մկրտեցան աղօթ-քին, որու մասին պիտի խօսինք յաջորդաբար:

31. ՈՒԹ ՕՐ ԵՏՔ

Թէեւ մկրտութեան արարողութեան բնագրին հետ անմիջական կապ չունի, սակայն կարեւոր կը նկատենք յիշատակել փոքրիկ հատ-ուած մը, որ մկրտութեան արարողութեան չափ հին է եւ պահպան-ուած է բոլոր ձեռագիր Մաշտոցներու մէջ: Սորագիրը կ'ըսէ. Եւ յետ ուր աւուր վերացուցանէ քահանայն զպսակն ասելով գաղօթս. Որք մկրտեցան եւ լուսաւորեցան:



ԺԳ դարու Վատիկանեան Մաշտոցը բոլորովին եղական բան մը կը պատուիրէ, ինչ որ Երուսաղէմեան տպագրութիւնն ալ որդեգրած է. Յաւուրն ու քերական լինի լուսացումն նորընծային եւ վերացուցանէ... Նման խորագիր ոչ մէկ ձեռագիր Մաշտոցի մէջ կը գտնենք: Ոորագրերն էր ընդհանրապէս անորոշ կը ձգեն թէ ուր պիտի կատարուի ու թերորդ օրուան կանոնը. սակայն դարերու ընթացքին կը տեսնուի որ մկրտեալին տան մէջ կը կատարուի այս կարգը, որովհետեւ Մաշտոցներու մէջ կը կարդանք գայ քահանայն եւ վերացուցանէ... , եւ կամ երբայ քահանայն. ԺԷ դարու Մաշտոցները պիտի սիրեն յըստակութիւնը գայ քահանայն ի տուն մկրտեալին...: Քահանան կը հանէ մկրտեալին գլուխէն պսակը, որ ութ օր մնացած էր գլխուն վրայ, ըսելով Որք մկրտեցան աղօթքը. 1554ի Մաշտոցին համաձայն քահանան մկրտեալին գլուխէն կը հանէ նաքօտը փոխանակ պսակին:

(★) Տպագիր Մաշտոցներէն Վիեննական օրինակը ղեղչած է ութօրեայ կանոնին թէ՛ խորագիրը եւ թէ՛ աղօթքը, որու փոխարէն լայնօրէն ընդունած է Կանոն յորժամ գաղափարեայ տղայն ածեն յեկեղեցին:

Երուսաղէմեան Մաշտոցն ալ, իրաւացի կերպով անյարմար դըտնելով ութօրեայ կանոնի խորագիրը, ղեղչած է, բայց ոչ աղօթքը, որ կը կարդայ Սուրբ Խաչիւս քարոզէն ետք: Մկրտութեան արարողութեան վերջին աղօթքն է սա Ձեռագրիւններու մէջ. նոյնպէս պահած է կարգը Երուսաղէմի Մաշտոցը, միայն թէ անտեղի է աղօթքէն ետք դարձեալ ըսելը Սուրբ Խաչիւսը, կամ աւելի տրամաբանական է ղեղչել առաջինը՝ պահելով երկրորդը, որու կը հետեւի Պաշապանիչ եւ Հայր մեր:

32. ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Մկրտութեան բնագրին մասին մեր դիտողութիւնները փակելէ առաջ, հարկաւոր կը համարինք ակնարկ մըն ալ տալ այն շարականներուն, որոնք կ'երգուին արարողութեան ընթացքին:

Շարականներու յայտնութիւնը համեմատաբար աւելի նոր է քան արարողութեան բնագիրը, ափսոսանք որ հնագոյն Մաշտոցներու մէջ, սկսեալ Թ-Ժ դարու երկաթագիր օրինակներէն, ոչ մէկ շարականի կը հանդիպինք, եւ ինչպէս տեսանք վերեւ, եւ ոչ իսկ ջուրն օրհնելու Օրհնեսցի եւ սրբեսցի ջուրս երգը կը գտնենք մեր հին ձեռագիրներու մէջ:

Մինչեւ ԺԵ դարու երկրորդ կէսը, շարականները բացակայ են Մաշտոցներէն, ապա առանց յատուկ կանոնի մը կը սկսին յայտնուիլ, երթալով կը սկսին բազմանալ, այնպէս որ ԺԸ-ԺԹ դարու

Մաշտոցները կը ծանրաբեռնուին, եւ միայն Մկրտութեան արարողութեան մէջ կը հանդիպինք տասնեակ շարականներու:

Ձեռք գիտեր թէ որու ձեռքով շարականները մտած են ներս, այսքանը սակայն որոշ է որ բնիկ հայկական Մաշտոցները զուրկ են անոնցմէ, նոյն իսկ Գէորգ Երզնկացիի նոր խմբագրութեան մէջ, ԺԴ-ԺԵ դարու առաջին կէսին, դեռ չկան շարականները, սակայն հոն է որ առաջին անգամ կը սկսին երեւիլ, եւ անոնց ազդեցութեամբ կը սկսին որդեգրուիլ նաեւ մկրտութեան հին խմբագրութենէն:

Եթէ նկատելու ըլլանք միայն որոշ թուական կրօն Մաշտոցներու շարականները, առաջնութիւնը կը գրաւէ 1345ի Սիսի Մաշտոցը, որ ունի երկու շարական.

ԱԿ. Արեգակն արդարութեամբ Գրիստոս ծագեալ.

ԴԶ. Առաքելոյ աղանոյ իջանելով մեծաձայն.

չենք կարծեր սակայն որ այս Մաշտոցը ազդեցութիւն ունեցած ըլլայ յաջորդ դարու օրինակներու վրայ, որովհետեւ Սիսի օրինակը եղական ձեռագիր մըն է, ուր խառնուած են լատին եւ հայ արարողութիւնները միասին, եւ յաջորդ դարու ոչ մէկ ձեռագիր հաւատարիմ օրինակողը եղած է Սիսի օրինակին:

Ժամանակագրական կարգի մը հետեւելով, կու տանք ստորեւ ցանկը այն շարականներուն, որոնք դարերու ընթացքին յայտնուած են Մաշտոցներու մէջ:

Տարի	Ձեռ. քիւ	Շարականներ
1480	1372	ԱԶ. Երզնկացուք երգ նոր. ԴԿ. Յաղթական քեզ օրհնութիւն.
1489	148	ԱԿ. Արեգակն արդարութեան Գրիստոս.
1499	1157	ԴԶ. Լոյս ի լուսոյ ի Հօրէ.
1503	1895	ԲԿ. Երրորդութիւն անբաժանելի. ԴԶ. Արեգակն արդարութեան Գրիստոս. ԲԶ. Յէք զանուն Տեսն ալէլ. ալ. ալ. Այսօր ընդ զօրս երկնից. ԴԶ. Առաքելոյ աղանոյ իջանելով. ԲԶ. Փառաւորեալդ փառօք Երրորդութիւն. ԴԶ. Որ յառաջագոյն յօրէնս. ԴԶ. Որ կոչեցար յորդեգրութիւն Հօրն. ԴԶ. Ամենասուրբ Երրորդութեանդ երկրպագեն. Որ կազմեցեր սեղան. ԲԶ. Մանկունք եկեղեցւոյ փառաբանիչք.
1570	624	ԱԶ. Երզնկացուք երգ նոր.
1571	1891	ԱԶ. Երզնկացուք երգ նոր. ԴԶ. Լոյս ի լուսոյ ի Հօրէ.

- 1583 1163 ԳՁ. Արեգակն արդարութեան Գրիստոս.
ԴՁ. Առաքելոյ աղանոյ.
ԴՁ. Որ յառաջագոյն յօրէնս.
ԲՁ. Մանկունք եկեղեցւոյ փառարանիչք.
ԲԿ. Որ պսակիչդ ես ամենայն.
ԴԿ. Անթառամ պսակն.
ԴՁ. Ամենասուրբ Երրորդութեանդ.
ԴՁ. Որ հաստատեցեր բանիւ.
- 1664 1016 ԴԿ. Որ անտես եւ անքնին.
- 1673 1269 ԴԿ. Խորհուրդ մեծ եւ սքանչելի.
ԴԿ. Այսօր բանն ի Հօրէ անմեկնելի.
- 1684 1314 ԳՁ. Որ համադոյդ ես Հօր եւ Որդւոյ.
ԲԿ. Այսօր աղբիւր գիտութեան (5 տուն).
Անթուական ձեռագիրներու մէջ եւս կը գրու-
նենք ցրուած նոր շարականներ.
- Վատիկ. Բիւ 100 ԲԿ. Այսօր երկնայինքն ուրախանան.
ԲԿ. Այսօր ընդ զօրս երկնաւորս.
- Ձեռ. Բիւ 1210 ԴՁ. Կենդանարար Աստուած մարդասէր.
ԱԿ. Նշանաւ ամենայաղթ խաչիւդ.
ԲԿ. Խաչն կենարար որ եղեւ մեզ.
- Ձեռ. Բիւ 1743 ԲՁ. Նոր խորայնէ կոչեցաք.
- Ձեռ. Բիւ 1975 ԴԿ. Լոյս ի լուսոյ ծագեալ ի Հօրէ.

Շարականներու տրուած համայնապատկերէն կը տեսնուի թէ ինչպէս առանց յատուկ օրէնքի մը մկրտութեան արարողութենէն ներս մտած են անոնք, որովհետեւ նոյն շարականը զանազան ձեռագիրներու մէջ կը գրուէ այս կամ այն տեղը:

(★) Տպագիր Մաշտոցներէն Վիեննական օրինակը շատ մեծ խընայողութեամբ առած է շարականներ, այսինքն միայն ԴՁ. Առաքելոյ աղանոյ, այն ալ մէկ տուն, եւ ԴՁ. Որ յառաջագոյն յօրէնս յօրինակ՝ միայն մէկ տուն: Աւելի ճոխ է Երուսաղէմի Մաշտոցը, ուր կը հանդիպինք ձեռագիրներու ունեցածէն տարբեր շարականներու ալ. ահա անոնց պատկերը.

- ԲԿ. Երրորդութիւն անբաժանելի.
ԴԿ. Զողորմութեան քո զգուռն.
ԴՁ. Արեգակն արդարութեան Գրիս.
ԴՁ. Առաքելոյ աղանոյ.
ԳՁ. Որ համադոյդ ես Հօր.
ԴԿ. Աղբիւր կենաց բաշխող.
ԴՁ. Որ յառաջագոյն յօրէնս.
ԲՁ. Աստուած խօսեցաւ ի.

- ԴԿ. Որ անտես եւ անքնին.
ԴՁ. Լոյս ի լուսոյ ի Հօրէ.
ԴՁ. Նոր Սիոն ծնեալ մանկունք:

* * *

Ամփոփելով մեր անդրադարձութիւնները, կ'ուզենք ուսումնասիրել թերացողին ուշադրութեան յանձնել հետեւեալ նկատողութիւնները:

Վերեւ եղած դիտողութիւնները ցոյց կու տան թէ ներկայիս Հայ Կաթողիկէ եւ Առաքելական եկեղեցւոյ մէջ գործածուած Մաշտոցները որքան հեռացած են մեր նախնիքներու դժած ճամբէն, որդեգրելով նոր ու անհարազատ ձեւեր:

Գիտական աշխարհը այսօր մեզմէ կը պահանջէ հարազատ Մաշտոց մը, հարազատութիւն մանաւանդ խորագիրներու, որոնք դարեւրու ընթացքին խաթարուած են, եւ դրեթէ անճանաչելի ըլլալու աստիճան կերպարանափոխ եղած են տպագրութիւններու մէջ:

Օրը օրին դեռ աւելի կը տեսնուի եւրոպացիներու մէջ արեւելեան եկեղեցիներու պատմութեան ու ծէսին ուսումնասիրութեան ծարաւը, անոնք կ'ուզեն մեր մէջ գտնել մեր եկեղեցւոյ ու ծէսին յատուկ դիմագիծը, տարբեր միւսներէն, ու մեր սրբազան պարտականութիւնն է՝ անոնց ներկայացնելէ առաջ՝ նախ մենք ծանօթանանք, ճաշակենք ու կիրարկենք, եւ հուսկ իր հարազատութեամբ ներկայացնենք ուրիշին:

Եւ որովհետեւ ներկայիս Հայ եկեղեցւոյ զոյգ համայնքներու նուիրապետութիւնները հետամուտ են վերատեսնելու ծիսարանը, ժամանակն է իմաստութեամբ օգտագործելու առիթը, մաքրելու համար մեր Մաշտոցը նորամուտ տարրերէ, դառնալու համար հինին, հարազատին, հայկականին:

Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ

(Շար. Բագմավեպ, 1972, Բ. 2-3, էջ 211-231)

Յետ այսորիկ օծանէ սուրբ իւղովն. նախ գնակատն ասելով.

Իւղ անոյշ հեղեալ յանուն Քրիստոսի ի վերայ քո, կնիքն

285 երկնաւոր պարգեւացն:

Ապա զաչսն.

283. + եւ յետ BCGԾ: + եւ ապա յետ J: > յետ այսորիկ Յ: յետ այսորիկ օծանէ] եւ տեառնադրէ ֆՁԹ: նոյն] եւ ապա տեառնադրէ Գ: նոյն] եւ ապա կնքէ Գ: յետ... իւղովն] եւ տեառնադրէ մեռնաւն M: եւծանէ Յ: օծանէ] կնքէ CG HIJdցՁԾզը: օծանէ] տեառնադրէ BԸ: օծանէ սուրբ իւղովն] առեալ զմիւսն կնքէ F: > սուրբ իւղովն ՁԹ: եղովն GH եղովն I: + եւ իւղովն Գ: իւղովն] մեռնաւն Գ: մեռնաւն Շ: + իւղովն դձ. Որ յառաջագոյն յաւրէ. Հ: > նախ H: ասէ Գ: > ասելով F: + եւ ասէ այսպէս B: + եւ ասէ dg:

284. եղ G: եւղ HIfԳԳՁԾզը: եւղոս Յ: > անոյշ Շ: ~ հեղեալ ի վերայ HԳը: անուն զ: ~ յանուն յիսուսի (> քրիստոսի) հեղեալ GM: ~ յանուն (անուն Շ) քրիստոսի հեղեալ IԾ: ~+ յանուն (անուն Յ) յիսուսի քրիստոսի հեղեալ ֆՁԹ: > յանուն քրիստոսի ը: յանուն... պարգեւացն] հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ Գ:

> քրիստոսի զ: քրիստոսի] յիսուսի dg: + յիսուսի քրիստոսի CJԳԸՀՁ: + յիսուսի քրիստոսի ի յաւծումն սրբութեան F: քրիստոսի... պարգեւացն] հաւր եւ որդւոյ H: A չունէր ի վերայ քո, աւելցուցինք՝ հետեւելով միւս ձեռագիրներուն: + կնիք երկնիք Ը: 285. երկնաւոր] աստուածային ՇԾ: + աստուածային եւ (> եւ I) երկնաւոր GIՁզ: պարգեւացն] պատուիրանացն Շ: + պարգեւացն հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ B: + պարգեւացն յանուն հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ այժմ եւ G: + պարգեւացն քրիստոսի M: + պարգեւացն հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ ֆՁԹ: + պարգեւացն հաւր եւ որդւոյ ՀԹ: + պարգեւացն յանուն հաւր Ձ:

286. ~ 286-8] 289-291 Jdցը: > ապա CFGHIJMdfգԳԳԸՀՁՁՅՇզըԹ: + եւ ապա B: + զաչսն եւ ասէ Bdg: + զաչսն ասելով CHIJԳԸՀՁՁՅզըԹ:

կնիքս որ յանուն Քրիստոսի՝ լուսաւորեսցէ զաչս քո, զի մի երբեք ննջեսցես ի մահ:

Եւ զականջսն.

290 Օծումն սրբութեան եղիցի քեզ՝ ի լսելութիւն աստուածային պատուիրանացն:

Ձեռնդրեալսն.

կնիքս Քրիստոսի՝ եղիցի քեզ ի հոտ անուշուրբեան ի կենաց ի կեանս:

295 Ձբերանն ասելով.

